Doi: 10.56737/2953-7843-2025.10-67

ՄԱՆԵ ԿՈՆԻՆՅԱՆ
ՀՀ ԳԱԱ ՊԻ

ԱՐԵՄՏԱՀԱՅՈՒԹՅԱՆ ՁԱՆԳՎԱԾԱՅԻՆ ԿՈՏՈՐԱԾՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ՆՎԻՐԱԿ ԱՆՁԵԼՈ ՄԱՐԻԱ ԴՈԼՉԻԻ 1915 Թ. ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ[1]

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Թուրքական վարչակարգի ցեղասպան քաղաքականության հետեւանքով արեւմտահայությունը հայտնվեց ոչնչացման իրական վտանգի առաջ։ Այդ ծանր ժամանակաշրջանում հայ ժողովրդի ողբերգության հանդեպ անհաղորդ չմնացին որոշ չեզոք պետություններ։ Դրանց թվում առանձնահատուկ նշանակություն ուներ Սուրբ Աթոռը (Վատիկանը), որը լինելով ոչ միայն կաթոլիկ եկեղեցու հոգեւոր կենտրոն, այլեւ միջազգային հարաբերություններում ազդեցիկ դերակատար, հաղորդակից դարձավ հայ ժողովրդի ողբերգությանը։ Պապական առաքելությունը հանդես եկավ մի շարք խաղաղարար եւ մարդասիրական նախաձեռնություններով, որոնք միտված էին մեղմել պատերազմի հետեւանքով ստեղծված աղետալի իրավիճակը։ Վատիկանի գործունեությունը դրսեւորվեց տարբեր ուղղություններով՝ ներառելով Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքում եւ փոխանցում, մարդասիրական օգնության կազմակերպում, ինչպես նաեւ հայ գաղթականների ու հատկապես որբերի պաշտպանությանն ուղղված քայլեր։ Այդ նախաձեռնությունները, թեեւ չէին կարող կանխել իրականացվող հանցագործությունների ընթացքը, այնուամենայնիվ, որոշակի դեր ունեցան միջազգային հանրության իրազեկման, ինչպես նաեւ հայ ժողովրդի նկատմամբ ցուցաբերված բարոյահոգեբանական ու նյութական աջակցության համապատկերում։

---

[1]* *Ստացվել է՝ 8.08.2025, գրախոսվել է՝ 9.09.2025։*
Էլ. հասցե՝ koninyan.mane2024@gmail.com:

ՍՈՒՐԲ ԱԹՈՌԻ ԴԻՐՔՈՐՈՇՈՒՄԸ ՀԱՅԱՀԱԼԱԾ ՔԱՂԱՔԱՆՈՒԹՅԱՆ ՆԿԱՏՄԱՄԲ

Առաջին աշխարհամարտի տարիներին օսմանյան տիրապետության ներքո գործող կաթոլիկ համայնքների իրավական կարգավիճակի վատթարացումը եւ նրանց նկատմամբ իրականացվող սահմանափակումները առանձնապես մտահոգիչ էին Սուրբ Աթոռի համար։ Այդ քաղաքականությամբ պայմանավորված՝ Բենեդիկտոս ԺԵ. պապի նախաձեռնությամբ Օսմանյան կայսրություն ուղարկվեց առաքելական նվիրակ՝ նպատակ ունենալով մի կողմից պաշտոնապես ներկայացնել Սուրբ Աթոռի մտահոգությունները ու դիրքորոշումը, մյուս կողմից՝ պաշտպանելու տեղի կաթոլիկների իրավունքներն ու հնարավորինս մեղմելու նրանց վիճակը։ 1914 թ. դեկտեմբերի 1-ին Կ. Պոլիս ժամանեց արքեպիսկոպոս Անջելո Մարիա Դոլչին՝ պաշտոնապես հանդիսանալով Սուրբ Աթոռի բարձրագույն դիվանագիտական ներկայացուցիչը՝ նունցիուսը, որն օժտված էր առաքելությանը հատուկ հատկանիշներով՝ զարգացած դիվանագիտական կարողություններ, գործելակերպի հաստատակամություն եւ հետեւողականություն[2]։ Նա ստացել էր լայն լիազորություններ՝ տեղում ուսումնասիրելու կաթոլիկ համայնքների վիճակը, ներկայացնելու նրանց խնդիրները օսմանյան իշխանություններին եւ պաշտպանելու վերջիններիս իրավունքները՝ եկեղեցական կյանքի անարգել ընթացքն ապահովելու համար։ Այդ դիվանագիտական առաքելությունը պետք է կարեւոր հիմք դառնար Վատիկանի եւ օսմանյան կառավարության միջեւ հարաբերություններում՝ ծառայելով ոչ միայն կաթոլիկ, այլեւ ընդհանրապես կայսրության քրիստոնյա բնակչության շահերի պաշտպանությանը։ Թեեւ Անջելո Դոլչին պաշտոնապես ճանաչված դիվանագետի կարգավիճակ չուներ, այնուամենայնիվ, վայելում էր Հռոմի պապի եւ հատկապես Վատիկանի պետքարտուղար, կարդինալ Պիետրո Գասպարրիի լիակատար աջակցությունն ու հովանավորությունը՝ կարեւոր դեր խաղալով Վատիկանի տեղեկատվական ու բարոյական արձագանքների ձեւավորման գործընթացում։ Որպես Սուրբ Աթոռի նվիրակ՝ Անջելո Դոլչին միաժամանակ երկակի պարտավորություն ուներ. մի կողմից ապահովել Սուրբ

---

[2] *Տե՛ս* V. Karakhanian, O. Viganò, 2016. La Santa Sede e lo sterminio degli armeni nell'Impero Ottomano, Dai documenti dell'Archivio Segreto Vaticano e dell'Archivio Storico della Segreteria di Stato, Milano: Guerini e Associati, *էջ 48։*

Աթոռի շահերը եւ քրիստոնյա՝ հատկապես կաթոլիկ համայնքների իրավունքների պաշտպանությունը, իսկ մյուս կողմից՝ հանդես գալ որպես միջնորդ-դերակատար՝ նպատակ ունենալով մեղմել տարածաշրջանային լարվածությունը։

Թուրքական վարչակարգի որդեգրած հանցավոր քաղաքականության վերաբերյալ Անջելո Դոլչիի արժեքավոր ու հավաստի վկայությունները՝ որպես չեզոք դիտորդի արձանագրություններ, կարեւոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Հայոց ցեղասպանության պատմության ուսումնասիրության գործում։ Դոլչիի հաղորդումները ոչ միայն պատմական իրողությունների փաստագրություններ են, այլեւ արտացոլում են այն ժամանակվա միջազգային հանրության դիրքորոշումն ու արձագանքը։

Պաշտոնն ստանձնելուց անմիջապես հետո Դոլչին դեկտեմբերի 2-ին հեռագրեց Սուրբ Աթոռ՝ ընդգծելով ստեղծված իրավիճակի ծայրահեղ լրջությունը. «Թուրքիայի դրությունը խիստ ծանր է։ Ֆրանսիական միաբանների ներկայացուցիչները հեռացել են, եւ մենք անհանգստանում ենք, որ խնդիրները կարող են խորանալ, հատկապես Իտալիայի՝ պատերազմին ներգրավվելու պարագայում»[3]։ Դոլչին համոզված էր, որ Վատիկանի նախաձեռնած դիվանագիտական հարաբերությունների խզումը Օսմանյան կայսրության հետ կարող էր կործանարար հետեւանքներ ունենալ կայսրության տարածքում բնակվող կաթոլիկ համայնքների համար[4]։ Թուրքական պատմագրության մեջ այդ մոտեցումը ներկայացվում է այնպես, որ Վատիկանը հրաժարվել էր Օսմանյան կայսրության հետ անմիջական քաղաքական հարաբերությունների հաստատումից՝ իբրեւ թե Ֆրանսիայի հետ իր հարաբերությունները չվատթարացնելու նկատառումներից ելնելով[5]։ Այնինչ, Վատիկանի եւ Օսմանյան կայսրության միջեւ դիվանագիտական կապեր հաստատելու Դոլչիի առաջարկը պետք է դիտարկել բացառապես կայսրությունում կաթոլիկների պաշտպանությանը միտված դիրքորոշման համապատկերում։ Այդ մոտեցումը միաժամանակ վկայում էր Օսմանյան

---

[3] Տես M. Hesemann, Völkermord an den Armeniern, Mit unveröffentlicten Dokument aus dem Geheimarchiv des Vatikans über das größte Verbrechen des Ersten Weltkriegs, München, 2015, էջ 155:

[4] Տես A. Türkan, Turkey-Vatican Relations from the Ottomans to the Republic, “International Journal of Humanities and Social Science”, Vol. 5, N 5, May 2015, էջ 155:

[5] Տես C. Mutlu, Türkiye-Vatican Relations During the Turkish National Struggle (1918–1923), “Uluslararası Siyaset Dergisi” Journal, Cilt 3, Sayı 1, 2025, էջ 22:

կայսրությունում քրիստոնյա փոքրամասնությունների իրավազուրկ եւ անպաշտպան կարգավիճակի, ինչպես նաեւ նրանց նկատմամբ թուրքական իշխանությունների գործադրած կամայականությունների մասին։ Փաստորեն, Դոլչին վերահաստատում էր Օսմանյան կայսրության քրիստոնյա փոքրամասնությունների ծայրահեղ անպաշտպան վիճակը, ինչի վերաբերյալ Սուրբ Աթոռը բազմիցս ահազանգեր էր ստացել տարբեր կրոնական-քարոզչական ու դիվանագիտական աղբյուրներից։ Նա վերահաստատում էր կայսրության հայերի եւ մյուս քրիստոնյաների նկատմամբ իրականացվող բռնությունների խորքային պատճառներն ու տարածումը, որոնք հատկապես խորացել էին օտարազգի ներկայացուցիչների հեռանալուց հետո։

Օսմանյան կայսրությունում տեղի ունեցող իրադարձությունների վերաբերյալ Դոլչիի զեկուցագրերը Սուրբ Աթոռի համար տեղեկատվության ամենավստահելի ու անմիջական աղբյուր հանդիսացան, որոնք հիմնականում փաստագրվել էին Օսմանյան կայսրությունում գործող կաթոլիկ առաքելությունների, միաբանների եւ տարբեր հյուպատոսների հաղորդումների հիման վրա։ Վերջիններիս հաղորդագրություններում մանրամասնորեն նկարագրված էին այն խոշտանգումներն ու բռնությունները, որոնց ենթարկվում էին հայերը՝ անկախ իրենց դավանական պատկանելությունից։ Դրանք փաստում էին օսմանյան իշխանությունների իրականացրած նպատակային ու համակարգված բնաջնջման քաղաքականության մասին, որի հիմնական նպատակը հայ բնակչության ընկերային ու կրոնական բոլոր շերտերի ոչնչացումն էր։

Փաստագրված առաջին տեղեկությունները Սուրբ Աթոռ հասան 1915 թ. հունիսի առաջին կեսին, որտեղ Դոլչին պաշտոնապես անդրադառնում էր հայերի տեղահանություններին[6]։ Նշենք, որ տեղահանված հայերի վերաբնակեցումն իրականացվելու էր հիմնականում Մոսուլի նահանգի հարավային հատվածում, Դեր Զորի եւ Ուրֆայի շրջաններում

---

[6] Հայ բնակչության տեղահանությունն իրականացվել է երեք տարբեր տարածաշրջաններում եւ երեք հաջորդական ժամանակահատվածներում։ Այդ շրջաններն էին՝ 1. Կիլիկիան եւ Սիրիայի հյուսիսային մասը (Ադանայի նահանգ, Հալեպի նահանգ՝ Հալեպ, Սուետիա, Քեսապ, Իսկենդերուն, Քիլիս) եւ հայաբնակ Այնթապի եւ Ուրֆայի շրջաններ, 2. Արեւմտյան Հայաստան (Տրապիզոն, Կարին, Սեբաստիա, Խարբերդ, Տիգրանակերտ, Վան, Բիթլիս), 3. Արեւմտյան Անատոլիան (Նիկոմիդիան, Բրուսան, Կաստամունին, Գաղաթիան, Կոնիան)։ Տե՛ս Յ ո ւ հ. Լ ե փ ս ի ո ւ ս, Գաղտնի տեղեկագիր. Հայ ժողովրդի ջարդերը, Երեւան, ՀՅԹԻ, 2003, էջ 5։

(բացի կենտրոնական հատվածներից), Դամասկոսի նահանգի արեւելյան մասում, ինչպես նաեւ Հալեպի նահանգի արեւելյան եւ հարավ-արեւելյան հատվածներում[7]։ Վերոնշյալ բնակավայրեր հասած հայերը դարձան բռնությունների ու կոտորածների երկրորդ ալիքի թիրախ, որն սկսեց առավել սաստկանալ 1916 թ. ամռանը եւ շարունակվեց մինչեւ տարեվերջ։ Սուրբ Աթոռի դիվանագիտական ու տեղեկատվական ցանցը կարեւոր դեր կատարեց Օսմանյան կայսրությունում հայ բնակչության նկատմամբ իրականացվող զանգվածային ոճրագործությունների վերաբերյալ տեղեկատվության հավաքման հարցում։

ԱՆՋԵԼՈ ԴՈԼՉԻԻ ՓԱՍՏԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ՏԱՐԲԵՐ ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒՄ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ՏԵՂԱՀԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ[8] ՈՒ ԲՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Կայսրության տարբեր նահանգներում արձանագրված իրադարձությունների վերաբերյալ Անջելո Դոլչիի հաղորդագրությունները հնարավորություն են տալիս ավելի ամբողջական պատկերացում կազմել ստեղծված իրավիճակի լրջության, ինչպես նաեւ՝ օսմանյան իշխանությունների իրականացրած հակահայ համակարգված քաղաքականության մասին։ Սուրբ Աթոռ ուղղված իր զեկույցներում Դոլչին պարբերաբար արձանագրում էր կայսրության տարբեր նահանգներում տեղի ունեցող հայ բնակչության տեղահանություններն ու բռնությունները՝ ընդգծելով դրանց համընդհանուր բնույթը։ Կիլիկիահայության վիճակի մասին իրա-

---

[7] *Հետագա ամիսների ընթացքում վերաբնակեցման տարածքներն ընդլայնվեցին՝ ընդգրկելով Մոսուլի նահանգից հարավ եւ արեւմուտք գտնվող տարածքները, Դեր Զորի շրջանի հարավային եւ արեւմտյան տարածքները, Դիարբեքիրի սահմանից 25 կմ հեռավորության վրա գտնվող Հաբուր եւ Եփրատ գետերի հովտի բոլոր բնակավայրերը, բացառությամբ Հալեպի նահանգի հյուսիսային մասի, արեւելքում, հարավում եւ հարավ-արեւմուտքում գտնվող բոլոր գյուղերի ու քաղաքների, ինչպես նաեւ Դամասկոսի նահանգի Հավրան եւ Քերեք շրջանների երկաթուղային երթուղուց 25 կմ հեռավորության վրա գտնվող բոլոր գյուղերի ու քաղաքների, տե՛ս* T. Akçam, The Young Turks' Crime Against Humanity: he Armenian Genocide and Ethnic Cleansing in the Ottoman Empire, Princeton, N.J.: Princeton University Press, 2012, *էջ 250։*

[8] *Աղբյուրը հստակ չի ներկայացնում Օսմանյան կայսրության տարբեր նահանգներում իրականացված տեղահանություններին վերաբերող առաքելական նվիրակ Անջելո Դոլչիի զեկույցների ճշգրիտ ժամանակագրությունը։ Հաշվի առնելով, որ տեղահանությունների հիմնական փուլը համընկնում է 1915 թ. հունիս–օգոստոս ամիսների հետ, կարելի է ենթադրել, որ նշված զեկույցները Սուրբ Աթոռ են ուղարկվել հենց այդ ժամանակահատվածում։*

զեկվելու նպատակով Դոլչին կապ էր հաստատել Ադանայի գերմանական հյուպատոսարանի հետ, որի 1915 թ. հունիսի 22-ի պատասխան զեկույցն ամբողջությամբ հաստատել էր Դոլչիի կասկածները։ Զեկույցում նշվում էր, որ ամբողջ Կիլիկիայում իրականացվում են համակարգված հետապնդումներ, որոնց հիմնական նպատակը հայ բնակչության տեղահանումն է տարածաշրջանից. «Հաճնում ավելի քան 600 ընտանիքներ դաժանաբար տեղահանվեցին իրենց բնակավայրերից եւ տեղափոխվեցին Օսմանիյե, որտեղից նրանք ուղարկվեցին անհայտ ուղղությամբ։ Սույն իրադարձությունները հիշեցնում են հին դարաշրջանների սարսափները։ Քսան երիտասարդ տղամարդ առանձնացվեցին եւ ուղարկվեցին Հալեպ, որտեղ նրանց սպասվում էր անորոշ եւ, ամենայն հավանականությամբ, ողբերգական ճակատագիր։ Մերսինի եւ Տարսուսի շրջակա գյուղերը նույնպես դատապարտված են արտագաղթի»[9]։

Սեբաստիայի հայ բնակչության տեղահանության[10] ու հալածանքների վերաբերյալ Սուրբ Աթոռ հասած դաժան փաստերին իր հաղորդագրություններում անդրադարձել էր Դոլչին։ Նա առանձնահատուկ ընդգծում է հայ բնակչության հանդեպ կիրառվող բռնությունների համակարգված բնույթը. «Միայն արքեպիսկոպոս Լեո Քեցեգյանն է ողջ մնացել, մինչդեռ Թոքատից, Գուրինից եւ Փիրքնիքից ոչ մի քահանա չի փրկվել։ Թոքատում գտնվող վանականներից միայն մեկն է հասել Հալեպ, մնացած հինգը մահացել են, իսկ Գյուրինից երեք վանականներ են հասել։ Ես օգնություն ուղարկեցի այս դժբախտներին»[11]։ Դոլչիի փոխանցած տեղեկությունները լրացնում էր Կ. Պոլսի Հայ Կաթողիկե պատրիարքության կողմից Վատիկանին փոխանցված «Հայերի արտաքսումը Սեբաստիայից» սեբաստացի ականատեսի հուշագրությունը, որտեղ նշվում էր, որ չնայած ճշգրիտ տվյալներն իրեն հայտնի չեն, սակայն որոշ ընտանիքների թույլատրվել էր մնալ իրենց բնակավայրերում, որոնք նշագրված էին հատուկ խորհրդանիշներով։ Ականատեսը ենթադրում էր, որ նշված ընտանիքները, ըստ երեւույթին, դավանափոխվելու պատրաստակամություն էին հայտնել[12]։

---

[9] Տե՛ս M. Hesemann, Völkermord an den Armeniern..., էջ 201։

[10] Սեբաստիայի նահանգի հայ բնակչության տեղահանությունը սկսվել է 1915 թ. հունիսի վերջերին եւ հուլիսի սկզբներին, տե՛ս Յոհ. Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր..., էջ 47։

[11] Տե՛ս M. Hesemann, Völkermord an den Armeniern..., էջ 227։

[12] Անդ։

Վատիկան ուղարկած իր հեռագրերից մեկում, անդրադառնալով Էրզրումի հայերի տեղահանությանը[13], Դոլչին ներկայացնում էր հայ կաթոլիկ համայնքի ողբերգական վիճակը։ Նրա հաղորդմամբ՝ Էրզրումի թեմում հաշվվում էր շուրջ 3000 կաթոլիկ ընտանիք, որոնք գտնվում էին տեղահանության առաջին ալիքի թիրախում։ Դոլչին հատկապես մտահոգություն էր հայտնում թեմի շուրջ 40–50 քահանաների ճակատագրի կապակցությամբ՝ նշելով, որ նրանց վերաբերյալ որեւէ տեղեկություն չէր ստացվել։ Հնարավոր էր եղել պարզել միայն 9 վանականի ինքնությունը, որոնք ուղեւորվել էին դեպի Կ. Պոլիս։ Ըստ նրա հաղորդման՝ թեմի հավատացյալների մի մասը տեղահանվել էր Խարբերդ, իսկ մյուս մասը՝ Ուրֆա եւ Դեր Զոր։ Տեղահանվածների մեծ մասը ճանապարհին ենթարկվել էր հարձակումների, բռնությունների ու զանգվածային կոտորածների։ Վերապրածների շրջանակը՝ ըստ Դոլչիի վկայության, հիմնականում կազմել էին նրանք, ովքեր հարկադրված դավանափոխվել էին[14]։

Անդրադառնալով Բիթլիսի հայ բնակչության տեղահանությանն ու դրա հետեւանքներին, Դոլչին հատուկ ընդգծում էր նահանգի ավերածությունների ծավալն ու կիրառված բռնությունների դաժանությունը։ Նրա ձեւակերպմամբ՝ «քաղաքներն ու գյուղական բնակավայրերը ենթարկվել են երկրաշարժի ուժգնությանը համարժեք ավերման, իսկ բնակիչները՝ կոտորվել»[15]։ Դոլչիի դիտարկումը նկարագրում էր կատարվածի նյութական ու մարդկային կորուստների հետեւանքները՝ հստակ մատնանշելով օսմանյան քաղաքականության կործանարար բնույթը։ Ըստ նրա, օսմանյան կառավարությունը պաշտոնապես տեղեկացրել էր Հայ Կաթողիկե պատրիարք Պողոս Պետրոս Թերզյանին, որ Բիթլիսի հայ կաթոլիկ եպիսկոպոս Հակոբ Թոփուզյանն «անհետացել է» հայերի ապստամբության ընթացքում[16]։ Հասկանալի էր, որ նման ձեւակերպումներով եւ հայերի կազմակերպած կեղծ ապստամբության մասին տարածվող տեղեկություններով օսմանյան վարչակարգը նպատակ ուներ ոչ միայն կոծկելու իրականությունը, այլեւ պատասխանատվությունը տեղափոխել հայ բնակչության վրա՝ նրան ներկայացնելով որպես իրավիճակի նախաձեռ-

---

[13] Էրզրումի նահանգի հայ բնակչության տեղահանությունը սկսվել է 1915 թ. հունիսի կեսերից եւ հուլիսի սկզբներին, տե՛ս Յոհ. Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր..., էջ 47։

[14] Տե՛ս M. Hesemann, Völkermord an den Armeniern..., էջ 225։

[15] Տե՛ս նույն տեղում, էջ 236։

[16] Անդ։

նող կողմ։ Այդ եղանակով փորձ էր արվում արդարացնել բռնաճնշումների քաղաքականությունը եւ միջազգային հանրության առջեւ ներկայացնել դրանք որպես օրինական ինքնապաշտպանական միջոցներ։

Վատիկանի պետքարտուղար Պ. Գասպարրիին ուղղված 1915 թ. հունիսի 27-ի զեկույցում Անջելո Դոլչին անդրադառնում էր Մալաթիայի իրադարձություններին՝ հիմնվելով ականատեսի վկայության վրա։ Ըստ վերջինիս՝ հունիսի 7-ին քաղաքի մունետիկը հրապարակավ հայտարարել էր հայ բնակչությունից զենքերի առգրավման պահանջը. «Տղամարդիկ ձերբակալվեցին, իսկ նրանց տները ենթարկվեցին խուզարկության։ Ձերբակալության համար բավարար էր որեւէ թերթի կամ գրքի հայտնաբերումը, անգամ եթե այն թուրքերեն էր։ Զենք ունեցողները պարտադրված հանձնեցին դրանք, իսկ զենք չունեցողները, մարմնական բռնություններից խուսափելու նպատակով, ստիպված եղան 30–40 թուրքական լիրայով զենք ձեռք բերել եւ հանձնել իշխանություններին։ Այնուհետեւ տղամարդկանց գիշերը խմբերով տեղափոխեցին լեռներ եւ կացիններով սպանեցին։ Մոտ երկու շաբաթ անց Մալաթիա ժամանեցին ավազակախմբեր, որոնք սկսեցին համատարած ավեր եւ թալան։ Անպաշտպան մնացած կանայք ենթարկվեցին թալանի ու ամենավերջին անարգանքների։ Աղջիկներն աղաղակում էին՝ «Օ՜ Աստված, օ՜ Հիսուս, օգնի՛ր մեզ»։ Քրդական եւ չերքեզական խմբերը ամենագեղեցիկ կանանց, աղջիկներին եւ երեխաներին բաժանեցին միմյանց միջեւ»[17]։

«Հավատքի տարածման միաբանության» պատասխանատու կարդինալ Գ. Գոտտիին ուղղված 1915 թ. հունիսի 27-ի զեկույցում, Դոլչին, անդրադառնալով Վանի իրադարձություններին ու հայ բնակչության նկատմամբ օսմանյան կառավարության վերաբերմունքին, նշում էր, որ կառավարությունը «զայրացած է բոլոր հայերի վրա, եւ կան մտավախություններ, որ թուրքական իշխանությունները կարող են հրահանգել հայերի դեմ ընդհանուր կոտորածներ»[18]։ Նման իրադրության պայմաններում, խորապես մտահոգված հայ կաթոլիկ բնակչության մարմնավոր

---

[17] *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV, 1908–1925, A cura di Georges -Henri Ruyssen SJ, Edizioni Orientalia Christiana, Valore Italiano, Lilamé, *էջ 73–76։*

[18] *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio della Congregazione per le Chiese Orientali (ACO), vol. III, 1908–1925, A cura di Georges-Henri Ruyssen SJ, Edizioni Orientalia Christiana, Valore Italiano, Lilamé, *էջ 84։*

անվտանգության ու համայնքային գոյության հեռանկարով, Դոլչին նախաձեռնեց դիվանագիտական խորհրդակցություններ՝ փորձելով ապահովել ազդեցիկ միջնորդություն։ Այդ շրջանակում նա հանդիպում ունեցավ Կ. Պոլսում Գերմանիայի դեսպան Հանս ֆոն Վանգենհայմի հետ՝ քննարկելու հայ կաթոլիկների վիճակն ու հնարավոր պաշտպանական միջոցները։ Դոլչիի հավաստմամբ, Գերմանիայի դեսպանը կիսել էր այն դիրքորոշումը, որ օսմանյան իշխանությունները պարտավոր են պաշտպանական վերաբերմունք ցուցաբերել հայ կաթոլիկների նկատմամբ՝ մասնավորապես հաշվի առնելով այն հանգամանքը, որ վերջիններս, առաջնորդվելով իրենց դավանած կրոնի սկզբունքներով, խղճի պարտք են համարել հավատարմություն ցուցաբերել սուլթանին՝ որպես սուլթանի հավատարիմ հպատակներ[19]։ Դոլչին նաեւ հաղորդում էր, որ շարունակական կապ էր պահպանում Հայ Կաթողիկե պատրիարք Պողոս Պետրոս Թերզյանի հետ՝ հորդորելով նրան անձամբ դիմել Գերմանիայի դեսպանին՝ միջնորդելու օսմանյան կառավարության առջեւ, որպեսզի հայ կաթոլիկներին զերծ պահեն ընդհանուր տեղահանման քաղաքականությունից։

Սամսունում տեղի ունեցած իրադարձությունների մասին Անջելո Դոլչին հավաստի աղբյուր էր ստացել Ֆրանցիսկյան միաբան Միշելե դա Քաբոդիստրիայից, որի 1915 թ. հունիսի 30-ի երեք էջանոց զեկույցը մանրամասն նկարագրվում էր, թե ինչպես տեղական իշխանությունները հայ բնակչության զանգվածային տեղահանության հրաման էին արձակել՝ առանց տարիքային ու սեռային տարբերակման. «Միայն քչերն էին կարողանում վաճառել իրենց ունեցվածքը, այն էլ՝ ոչ կանոնակարգված, այլ աղետալի գներով։ Հունիսի 28-ին եւ 29-ին հայտարարվել է մահմեդական քարոզչություն։ Արդեն մի քանի հարյուր հայ ընտանիք (ներառյալ հինգ կաթոլիկ ընտանիք) դավանափոխվել է»[20]։ Վերոհիշյալ զեկույցը լրացնում էր Սամսունում Գերմանիայի փոխհյուպատոս Քուքհոֆը։ Վերջինս Կ. Պոլսի Գերմանիայի դեսպանին հասցեագրած իր հեռագրում մատնանշում էր, որ հայ կաթոլիկ համայնքի եկեղեցիները, դպրոցները եւ ամբողջ

---

[19] *Հայ կաթոլիկների մեծամասնությունը ապրում էր մայրաքաղաքում, Կիլիկիայում եւ Լիբանանում։ Նրանց հոգեւոր առաջնորդը հավատում էր, որ կարող է նրանց պաշտպանել մահմեդականների կամայականությունից, եթե բացահայտորեն իր հավատարմությունը ցուցաբերի սուլթանին։*

[20] *Տե՛ս* M. Hesemann, Völkermord an den Armeniern..., *էջ 209։*

համայնքային ունեցվածքը պաշտոնապես բռնագրավված եւ կնքված է՝ ներառյալ դավանափոխվածների անձնական սեփականությունը[21]։ Այդ տեղեկությունը եւս մեկ անգամ վկայում էր, որ հայ բնակչության տեղահանման ու զանգվածային բռնություններին զուգահեռ կիրառվում էր նաեւ նրանց գույքի բռնագրավմանն ուղղված քաղաքականություն, ինչը, փաստորեն համայնքային ու մշակութային ժառանգության լիակատար ոչնչացման փորձ էր։

Անդրադառնալով Տրապիզոնի նահանգի հայ բնակչության տեղահանությանն[22] ու կոտորածին[23], Անջելո Դոլչին, նշում էր. «Մենք չունենք որեւէ տեղեկություն Տրապիզոնի թեմի 13 քահանաների ճակատագրի վերաբերյալ. հաղորդվում է, որ նրանք կոտորվել են։ Նույն կերպ բացակայում են տվյալներ Տրապիզոնից եւ Մարզվանից 22 միանձնուհիների ճակատագրի վերաբերյալ»[24]։

Օսմանյան կայսրությունում հայ բնակչության դեմ սկսված հալածանքների ու տեղահանությունների համապատկերում հատկապես մեծ հնչեղություն ստացան Դիարբեքիրի նահանգում եւ մասնավորապես Մարդինի շրջանում տեղի ունեցած բռնությունները, որոնց վերաբերյալ Սուրբ Աթոռ փոխանցած իր զեկույցներում Դոլչին առանձնահատուկ շեշտադրում էր տվյալ տարածաշրջանում հայ կաթոլիկների հալածանքներն ու կոտորածները։ Մարդինում տեղի ունեցած զանգվածային ջարդերը, որոնց արդյունքում սպանվել էր Հայ Կաթողիկե Եկեղեցու Մարդինի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանը, ինչպես նաեւ շուրջ 700 կաթոլիկ հավատացյալներ, առանձնահատուկ հնչեղություն ստացան ինչպես տեղական, այնպես եւ միջազգային շրջանակներում։ Կ. Պոլսի գերմանական դեսպանատան ներկայացուցիչները Դոլչիին տեղեկացրել էին, որ իրենց տրամադրության տակ առկա են ճշգրիտ տեղեկություններ այն մասին, որ Մարդինի հայերը բռնի կերպով վտարվել էին գյուղական վայրեր, որտեղ էլ սպանվել էին իրենց հոգեւոր առաջնորդի՝

---

[21] Տե՛ս Վ. ԳՈՒՍՏ, Հայերի ցեղասպանությունը 1915–1916 (Գերմանիայի արտաքին գործերի նախարարության քաղաքական արխիվի փաստաթղթերից), Երեւան, «Հայաստան» հրատ., 2005, էջ 226։

[22] Տրապիզոնի նահանգի հայ բնակչության տեղահանությունը սկսվել է 1915 թ. հունիսի վերջերին եւ հուլիսի սկզբներին, տե՛ս ՅՈՀ. ԼԵՓՍԻՈՒՍ, Գաղտնի տեղեկագիր..., էջ 47։

[23] Տրապիզոնի նահանգի 53 հազար հայերից միայն 2500-ը կաթոլիկ էին, տե՛ս ՅՈՀ. ԼԵՓՍԻՈՒՍ, Գաղտնի տեղեկագիր..., էջ 21։

[24] Տե՛ս M. HESEMANN, Völkermord an den Armeniern..., էջ 220։

արքեպիսկոպոս Իգնատիոս Մալոյանի հետ միասին[25]։ Այդ դեպքը դարձավ հերթական կարեւոր ազդակ Սուրբ Աթոռի համար՝ վկայելով այն մասին, որ կայսրության քրիստոնյա բոլոր համայնքները՝ անկախ դավանական պատկանելությունից, ենթակա էին օսմանյան կառավարության իրականացրած բռնություններին։

Անջելո Դոլչին Դիարբեքիրի (Ամիդ) նահանգում տեղի ունեցած տեղահանությունների ու կոտորածների առիթով նշում էր. «Դիարբեքիրում կար շուրջ 200 կաթոլիկ ընտանիք, սակայն բոլորը կոտորվեցին։ Մեծ թվով հայեր տեղափոխվել են դեպի Տիգրիս, որտեղ սպանվել ու նետվել են գետը։ Հոգեւոր առաջնորդի եւ միաբանների մասին որեւէ տեղեկություն չկա. նրանք, ամենայն հավանականությամբ, նույնպես դարձել են ջարդի զոհ»[26]։ Սիրիայի կաթոլիկ պատրիարք Իգնաս Եփրեմ Ռահմանու զեկույցը հաստատում էր Դոլչիի տեղեկությունները եւ լրացնում, որ նավակներով տեղահանված ուղեւորներին քաղաքը լքելուց 18 ժամ անց գնդակահարել են։ Նա հավելում էր, որ հայ կաթոլիկ եպիսկոպոս Զելեբյանը տարվել է Գոզլի կոչվող վայր ու սպանվել։ Նույն կերպ սպանվել են քրիստոնեական տարբեր ուղղությունների մյուս բոլոր հոգեւորականները. ոմանք՝ տեղահանության ճանապարհին, ոմանք՝ հենց եկեղեցիներում»[27]։

Խարբերդի նահանգում հայ բնակչության նկատմամբ իրականացված տեղահանության[28] վերաբերյալ Անջելո Դոլչիի՝ Սուրբ Աթոռ ներկայացրած 1915 թ. հուլիսի 29-ի զեկույցի առանցքային հարցերից մեկն առնչվում էր Խարբերդի հայ կաթոլիկ եպիսկոպոս Ստեփան Իսրայելյանի ճակատագրին, որը նույնպես ներառված էր տեղահանվածների խմբում[29]։ Զեկույցում նշվում էր, որ եպիսկոպոս Իսրայելյանն իր հոգեւորականների ու հավատացյալների ուղեկցությամբ տեղահանվել ու շարժվել էր Հալեպի ուղղությամբ, սակայն այնտեղ չեն հասել եւ նրանց գտնվելու վայրի վերաբերյալ ոչինչ հայտնի չէր։ Զեկույցում Դոլչին ընդգծում էր, որ այդ հար-

---

[25] Տե՛ս M. J. Somakian, Empires in Conflict..., էջ 88։

[26] Տե՛ս M. Hesemann, Völkermord an den Armeniern..., էջ 233։

[27] Անդ։

[28] Խարբերդի նահանգի հայ բնակչության տեղահանությունը սկսվել է 1915 թ. հունիսի վերջերին եւ հուլիսի սկզբներին, տե՛ս Յոհ. Լեփսիուս, Գաղտնի տեղեկագիր..., էջ 47։

[29] Խարբերդի եպիսկոպոս Ստեփան Իսրայելյանի անհետացման մասին Դոլչիին տեղեկացրել էր Կ. Պոլսի Հայ Կաթողիկե պատրիարք Պողոս Պետրոս ԺԳ. Թերզյանը։

ցով դիմել էր Կ. Պոլսում Գերմանիայի փոխդեսպան Էռնեստ Հոհենլոե-Լանգենբուրգին՝ խնդրելով պարզել տեղահանվածների ճակատագիրը։ Վերջինիս միջնորդության արդյունքում Հալեպում Գերմանիայի դեսպան Վալտեր Ռյոսլերը պատասխան հեռագրով հայտնել էր, որ ըստ ստացված տվյալների՝ Խարբերդի հայ կաթոլիկ եպիսկոպոս Ստեփան Իսրայելյանը մի քանի հոգեւորականների հետ միասին սպանվել էր Դիարբեքիրի եւ Ուրֆայի միջեւ ընկած ճանապարհին[30]։ Այդ եւ նմանատիպ բազմաթիվ փաստագրված վկայություններ վճռորոշ ազդեցություն ունեցան Դոլչիի դիրքորոշման ու հետագա գործունեության վրա։ Նշված տեղեկությունները ոչ միայն բացահայտում էին տեղական մակարդակում իրականացվող հալածանքների ու կրոնափոխության գործնական եղանակները, այլեւ հաստատում էին, որ կայսրությունում տեղի ունեցող բռնությունները ոչ թե ինքնաբուխ գործողություններ էին, այլ նախապես ծրագրված եւ պետականորեն համակարգված գործընթաց։

Օսմանյան կայսրությունում հայ բնակչության նկատմամբ իրականացված տեղահանությունների ու զանգվածային կոտորածների ընդհանուր համապատկերում Դոլչին առանձնահատուկ ուշադրություն էր դարձնում կաթոլիկ հայության հիմնական կենտրոններից մեկի՝ Անկարայի[31] հայ բնակչության ողբերգական ճակատագրին։ Անկարայի հայ առաքելական բնակչության հետ տեղահանվել են նաեւ կաթոլիկ հայերը՝ ենթարկվելով բռնությունների ու զանգվածային կոտորածի։ Գրիգոր վարդապետ Պալաքյանը նշում է, որ թեեւ հայ կաթոլիկները մշտապես հեռու են մնացել ցանկացած ազգայնական շարժումներից ու հակակառավարական գործունեությունից, այնուամենայնիվ, նրանք եւս չխուսափեցին հալածանքներից[32]։ Իշխանությունները փորձել են հարկադրել նրանց դավանափոխվել, բայց «կաթոլիկ հայ մայրերն եւ իրենց աղջիկներն կը յայտարարեն բացարձակապէս, թէ մահը նախամեծար կը համարեն քան անպատիւ այս դժոխային պայմաններու ներքեւ ապրիլը... հազարաւոր ժողովրդեան մէջէն հազիւ 10–14 կիներ եւ աղջիկներ այս ճամբով փրկուիլ ուզելով՝ մահուան կարաւանէն անջատուելով քաղաք... սպա-

---

[30] Տե՛ս M. Hesemann, Völkermord an den Armeniern..., էջ 229։

[31] Անկարան համարվում էր կաթոլիկ հայության հիմնական կենտրոններից մեկը, որտեղ ապրում էին շուրջ 2000 ընտանիք, տե՛ս Գ. Պալաքեան, Հայ գողգոթան. դրուագներ հայ մարտիրոսագրութենէն (1914–1920), հտ. Ա., Գ. տպագրութիւն, Անթիլիաս, 2003, էջ 171։

[32] Անդ։

նեալ հայերու ձգած հարիւրաւոր անչափահաս որբերն իսլամացնելով, երկար օրեր թլպատութեան մեծ հանդէսներ կը կատարուին եւ կառքերով քաղաքին մէջ կը շրջագայեցնեն իրենց վիճակին անգիտակից այս նորագիր իսլամներն, որոնք 5–12 տարեկան անչափահաս տղայք էին»[33]։ Հայ կաթոլիկներից շուրջ 1500 տղամարդ, այդ թվում՝ թեմական եպիսկոպոսն ու 17 հոգեւորականներ, ձերբակալեցին տեղական իշխանությունները։ Երկու օր անց՝ մոտ 800, այնուհետեւ մնացած 700 տղամարդիկ՝ զույգերով շղթայված, արտաքսվեցին քաղաքից։ Ժամանակի աղբյուրներից մեկում այսպես է բնութագրել Անկարայի հայ կաթոլիկ բնակչության հալածանքները. «Անկարայի դժբախտ կաթոլիկ հայերն էլ նույն ճակատագրին արժանացան. կառավարությունը լիովին լքեց նրանց եւ ծաղրանքով ասաց՝ «գնացե՛ք Իտալիա՝ ձեր պաշտպան Պապի մոտ»։ Տասնյակ հազարավոր մարդիկ մահացան այդ թեմից, արխիվները ոչնչացվեցին, բոլոր գրքերը՝ այրվեցին»[34]։

Օսմանյան կառավարությունը դիտարկել էր նաեւ Կ. Պոլսի հայ բնակչության տեղահանության հնարավորությունը։ Սակայն այդ ծրագրի իրականացումը կանխվել էր Գերմանիայի ջաներով։ Կ. Պոլսում Գերմանիայի փոխդեսպան Էռնեստ Հոհենլոե-Լանգենբուրգն իր զեկույցներում ընդգծում էր, որ օսմանյան իշխանությունները երաշխիք էին տվել, որ Կ. Պոլսի հայ բնակչությունը ազատ կմնա տեղահանություններից։ Նույնը հաստատում էր նաեւ Կ. Պոլսի Հայոց պատրիարք Զավեն Եղիայանը, նշելով, որ գերմանական կողմի միջամտությունը եղել է բավականաչափ ազդեցիկ՝ գործընթացի դադարեցման համար[35]։ Այսպիսով՝ Կ. Պոլսում կատարվել են միայն սահմանափակ տեղահանություններ։ Նմանատիպ իրավիճակ էր նաեւ Իզմիրում, որտեղ տեղահանությունների կանխման գործում առանձնակի դեր է խաղացել Իզմիրում բանակի հրամանատար գեներալ Լիման ֆոն Սանդերսը։ Նա վերջնագիր էր ներկայացրել Իզմիրի նահանգապետ Ռահմի բեյին՝ հայտարարելով, որ հայ բնակչության հետագա տեղահանություն չի թույլատրի՝ այն դիտարկելով որպես քայլ, որը կարող էր խիստ ապակայունացնել երկրի ռազմական դրությունը[36]։

---

[33] *Տե՛ս նույն տեղում, էջ 173։*

[34] *Տե՛ս* M. Hesemann, Völkermord an den Armeniern..., *էջ 261։*

[35] *Տե՛ս* Զաւէն Արքեպիսկոպոս, *Պատրիարքական յուշերս, վաւերագիրներ եւ վկայութիւններ, տպ. «Նոր աստղ», Գահիրէ, 1947, էջ 105–106։*

[36] *Տե՛ս* T. Akçam, The Young Turks' Crime Against Humanity..., *էջ 409։*

1915 թ. հունիսին կազմված իր զեկույցներում Անջելո Դոլչին արձանագրում էր, որ, չնայած հայերն իրենց ողջ ունեցվածքը դրեցին կառավարության տրամադրության տակ՝ անգամ դպրոցները, հիվանդանոցները եւ այլ հաստատություններ ծառայեցնելով ռազմական կարիքների համար, այնուամենայնիվ, կայսրության հայ բնակչությունը ենթարկվեց ծայրահեղ բռնությունների: Դոլչիի բնորոշմամբ՝ հայերը «ստրուկների հոտերի նման» բռնի կերպով տեղահանվեցին եւ քշվեցին Միջագետքի ու Սիրիայի անապատային շրջաններ: Շարունակելով զեկույցը՝ Դոլչին նշում է. «Կայսրության յոթ նահանգների հայ տղամարդիկ զանգվածաբար եւ անողոք կերպով կոտորվեցին, մինչդեռ անպաշտպան մնացած կանանց եւ աղջիկների մի մասը բռնի կերպով տարվեց հարեմներ, մյուս մասը կոտորվեց: Կանանց եւ աղջիկների հարկադիր դավանափոխությունը հասնում է հազարների: Հարկադիր դավանափոխության քարոզչությունը շարունակվում է մինչ օրս... յոթ նահանգների ողջ հոգեւորականությունը կոտորվեց, եկեղեցիներն ու վանքերը թալանվեցին, սրբավայրերը պղծվեցին: Կառավարությունը բռնագրավեց եկեղեցիների շարժական եւ անշարժ գույքը, ինչպես նաեւ բանկերում պահված գումարները»[37]:

Վատիկանի պետքարտուղար կարդինալ Պ. Գասպարրիին ուղղված 1915 թ. օգոստոսի 20-ի իր հերթական հեռագրում, Դոլչին խոր հուսահատությամբ գրում էր. «Անհնար է պատկերացնել, թե ինչ է տեղի ունենում երկրի ներքին շրջաններում: Թուրքական կառավարությունը սարսափելի վայրագություններ է գործել կայսրության տարածքում գտնվող անմեղ հայերի նկատմամբ... Այս խեղճ մարդիկ մեծ խմբերով ստիպված են ոտքով անցնել չոր, անջուր եւ անապատային շրջաններով, որտեղ նրանք տառապանքից ու զրկանքներից շատ արագ մահանում են... Մայրերը վաճառում են իրենց երեխաներին՝ փրկելու նրանց մահվան ճիրաններից... դա բարբարոսական տեսարան է, որը սրտիս ցավ է պատճառում եւ ինձ ահով է լցնում... Նման զարգացումների համապատկերում առավել ակնհայտ է դառնում, որ համանման ճակատագրի են արժանացել նաեւ Խարբերդի հայ կաթոլիկ եպիսկոպոս Ստեփան Իսրայելյանն ու նրան ուղեկցող հոգեւորականները»[38]:

---

[37] *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., *էջ 79–81:*

[38] *Տե՛ս* M. J. Somakian, Empires in Conflict..., էջ 91, M. Hesemann, Völkermord an den Armeniern..., *էջ 230:*

ԱՆՋԵԼՈ ԴՈԼՋԻԻ ԴԵՐԱԿԱՏԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՐԴԱՍԻՐԱԿԱՆ ՕԳՆՈՒԹՅԱՆ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՆԱԽԱՁԵՌՆՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Դոլչին իր դիվանագիտական հաղորդագրություններում ընդգծում էր, որ օսմանյան իշխանությունները հետեւողականորեն իրականացնում էին բազմաշերտ քաղաքականություն՝ մի կողմից հերքելով տեղի ունեցող զանգվածային բռնությունները, մյուս կողմից՝ ձգտելով բացառել միջազգային վերահսկողության որեւէ հնարավորություն: Նրա փոխանցած տեղեկությունների համաձայն՝ պաշտոնական շրջանակները նպատակաուղղված կերպով ձգտում էին ստեղծել տեղեկատվական անթափանց միջավայր, որտեղ արտասահմանյան դիվանագետները, եկեղեցական կառույցները եւ մարդասիրական կազմակերպությունները զրկվում էին իրական վիճակը գնահատելու հնարավորությունից: Դոլչիի զեկույցները փաստում էին, որ վարչական մարմինները ոչ միայն անհամաչափ ուժ էին կիրառում հայության նկատմամբ, այլեւ կանխում էին ցանկացած արտաքին միջամտություն, որը կարող էր մեղմել իրավիճակը կամ բացահայտել համատարած հանցագործությունների չափերը: 1915 թ. աշնանը մարդասիրական օգնության նախաձեռնությունների նկատմամբ գործադրված աճող ճնշումներն աստիճանաբար ստիպեցին, որ այդ ջանքերն իրականացվեն գաղտնիության պայմաններում: Այդ պայքարը փրկեց հազարավոր մարդկանց կյանքեր՝ փորձելով բարձր պահել բռնագաղթյալների ոգին: Սննդի եւ դեղորայքի գաղտնի բաշխում, որբերի խնամք, ճամբարներում գաղտնի հաղորդակցական ցանցերի ձեւավորում, ձեռագիր թերթերի տարածում եւ այլ նախաձեռնություններ վկայում էին կազմակերպված ու թիրախային դիմադրության առկայության մասին[39]: Այդ գործողություններում առանցքային դերակատարում ունեցավ կաթոլիկ եկեղեցին ու նրա ուղղորդած առաքելական պատվիրակությունները, որոնք համակարգված ջանքեր էին գործադրում՝ մեղմելու հայության նկատմամբ իրականացվող հալածանքները: Նրանց միջամտությունն ու աջակցությունը վճռորոշ էին հարյուր հազարավոր անօգնական հայերի պաշտպանության ու փրկության գործում: Մարդասիրական օգնության նախաձեռնություններում կարեւոր դերակատարություն

---

[39] *Տե՛ս* Kh. Mouradian, Genocide and Humanitarian Resistance in Ottoman Syria, 1915–1916, “Études arméniennes contemporaines”, 2016, № 7, *էջ 95:*

ուներ նաեւ Դոլչին, որի աշխույժ միջամտությունները՝ թե՛ տեղական, եւ թե՛ դիվանագիտական մակարդակներում, նպատակ ունեին նպաստել տեղահանված հայերին մարդասիրական աջակցություն տրամադրելու հնարավորությունների ընդլայնմանը։ Դոլչին բազմիցս միջնորդել էր Գերմանիայի դեսպանին՝ նրան հորդորելով օգտագործել իր ազդեցությունը օսմանյան կառավարության վրա՝ չեղարկելու այն դրույթը, որն արգելում էր օտարերկրյա տերություններին դրամական օգնություն տրամադրել տեղահանվածներին[40]։ Վկայությունների համաձայն՝ տեղահանության վայրերում հայերը սովամահ էին լինում, մինչդեռ օսմանյան կառավարությունը նպատակային կերպով արգելում էր նրանց հասցեագրված որեւէ օգնության փոխանցումը։ Նշվում էր, որ նույնիսկ Կ. Պոլսից ուղարկված սննդամթերքը տեղ չէր հասնում[41]։ Օսմանյան կառավարության կիրառած կանխարգելման միջոցառումները՝ արտաքին մարդասիրական օգնության վերահսկումը, դրամական փոխանցումների արգելքը, սննդամթերքի ու հագուստի առաքման խափանումը, ինչպես նաեւ տեղերում գործող օտարերկրյա անձնակազմի գործունեության սահմանափակումը, վկայում էին պետականորեն համակարգված քաղաքականության գոյության մասին։ Այդ շարակարգում նման քաղաքականությունը չէր կարող դիտարկվել որպես «պատերազմական» կամ «անվտանգության պայմաններից» թելադրված գործողություն, այլ՝ որպես ցեղասպանական գործելակերպի մի մաս, որի նպատակն էր ոչ թե վերահսկել, այլ՝ վերացնել։

Վատիկանի պետքարտուղար Գասպարրիին ուղղված 1915 թ. սեպտեմբերի 19-ի զեկույցում Դոլչին նշում էր, որ հայերի զանգվածային տեղահանության եւ հալածանքների հետ կապված իր քննադատություններին ու փաստարկված դիտարկումներին օսմանյան իշխանությունները պատասխանում են «արդարացնող» շրջաբերականներով։ Վերոհիշյալ հարցերով Դոլչիի բարձրացրած պնդումներին Ներքին գործերի նախարարությունը պատասխանել էր հեռագրական շրջաբերականով, որտեղ նշում էր, որ հայերի տեղահանության միակ նպատակը հակակառավարական գործունեության կանխումն ու հայկական անկախ պետության

---

[40] *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio della Congregazione per le Chiese Orientali (ACO), vol. III..., *էջ 114։*

[41] *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., *էջ 171։*

ստեղծմանն ուղղված ազգայնական ձգտումների չեզոքացումն է եղել[42]։ Պարզ էր, որ նման շրջաբերականով թուրքական վարչակարգը փորձում էր տեղահանությունները արդարացնել բացառապես անվտանգության նկատառումներով, այնինչ գործնականում դրանք ուղեկցվում էին բնակչության զանգվածային բնաջնջմամբ, ունեցվածքի բռնագրավումներով, մշակութային ժառանգության համակարգված ոչնչացմամբ։ Այդ կապակցությամբ Դոլչին 1915 թ. նոյեմբերի 26-ին պետքարտուղար Պ. Գասպարրիին ուղղված զեկույցում հայտնում էր, որ պապ Բենեդիկտոս ԺԵ. հորդորից ելնելով, հաճախ դիմել է Օսմանյան կայսրությունում Գերմանիայի եւ Ավստրո-Հունգարիայի հավատարմագրված դեսպաններին՝ փորձելով վերջիններիս միջնորդությամբ ազդել օսմանյան իշխանությունների վրա՝ հայ բնակչության դեմ իրականացվող զանգվածային հալածանքները դադարեցնելու նպատակով։ Նա փորձել էր ստանալ նաեւ Կ. Պոլսում հավատարմագրված Գերմանիայի նորանշանակ դեսպան Պաուլ Վոլֆ Մետերնիխի[43] աջակցությունը՝ իր այն նախաձեռնությունների շրջանակում, որոնք ուղղված էին Օսմանյան կայսրության արտաքին գործերի նախարարության քաղաքական բաժնի պատասխանատու Ահմեդ Ռեշիդ բեյի միջոցով միջամտություն ապահովելուն։ Դրանք էին՝

1. Ադանայի, Հալեպի եւ Բեյրութի նահանգներում գտնվող փակված կաթոլիկ բոլոր եկեղեցիների վերաբացումը,

2. Դամասկոսի շրջակայք արտաքսված Օսմանյան կայսրության ենթակայության տակ գտնվող հայկական ծագմամբ կաթոլիկների վերադարձի ապահովումը[44]։

---

[42] *Տե՛ս* M. J. Somakian, Empires in Conflict: Armenia and the Great Powers, 1895–1920, Tauris Academic Studies, 1995, *էջ 88։*

[43] *1912–1915 թթ. Օսմանյան կայսրությունում Գերմանիայի դեսպան Հանս Վանգենհայմին փոխարինում է Պաուլ Վոլֆ Մետերնիխը։ Նա Բեռլին ուղարկած իր զեկույցներում նշում էր, որ թուրքերի կողմից հայերի ոչնչացումը պլանավորված է վերեւից եւ իրականացվում է կազմակերպված ու անողոք մեթոդներով։ Չնայած Մետերնիխի դիվանագիտական ջանքերին՝ իր կառավարությունը, որի քաղաքական շահերը սերտորեն կապված էին Օսմանյան կայսրության հետ Առաջին համաշխարհային պատերազմի ընթացքում, մնաց հիմնականում պասիվ՝ սահմանափակվելով ձեւական դժգոհություններով։ Նա համարվում է այն հազվագյուտ գերմանացի պաշտոնյաներից մեկը, ով բարոյական դիրքորոշում է արտահայտել եւ փաստագրել է հայ ժողովրդի նկատմամբ իրականացվող ցեղասպանության իրական բնույթը։*

[44] *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV…, *էջ 157։*

Այդ կապակցությամբ դեսպան Մեսերնիխը 1915 թ. դեկտեմբերի 27-ին Բեռլին ուղարկած իր զեկույցում անդրադառնում էր Դոլչիի՝ հայերի պաշտպանության ուղղությամբ ծավալած գործունեությանը եւ խորը հիասթափությամբ արձանագրում, որ. «Առաքելական նվիրակի ձեռնարկած մեկ այլ քայլ՝ կապված փակված կաթոլիկ եկեղեցիների վերաբացման եւ աքսորյալ հոգեւորականների՝ իրենց թեմեր վերադառնալու իրավունքի ձեռքբերման հետ, Բարձր Դուռն ընկալեց որպես միջամտություն Թուրքիայի ներքին գործերին եւ որեւէ դրական արդյունք չունեցավ, ավելին, Կեսարիայի եպիսկոպոսը հետագայում հարկադրաբար տեղափոխվեց Հալեպ»[45]։

Զուր անցան նաեւ Անջելո Դոլչիի՝ Օսմանյան կայսրության Արտաքին գործերի նախարարությունում անցկացրած բանակցությունները՝ կապված Սուրբ Ծննդյան տոներին ընդառաջ բոլոր հայերին համաներում շնորհելու հետ։ Նա այդ գործընթացում աշխույժ կերպով ներգրավել էր նաեւ Կ. Պոլսում ԱՄՆ-ի եւ Գերմանիայի դեսպաններին, որոնք խոստացել էին միջնորդել ռազմական նախարար Էնվեր փաշայի մոտ, սակայն այդ նախաձեռնությունը եւս ոչ մի հաջողություն չունեցավ։

Արդեն 1915 թ. դեկտեմբերի 6-ին կարդինալների սրբազան ժողովում Պապը հատուկ անդրադառնալով այն նամակներին, որոնք Սուրբ Աթոռն ուղղել էր պատերազմող երկրների առաջնորդներին, նշում էր, որ չնայած դրանք «ընդունվեցին հարգանքով», սակայն չտվեցին ակնկալվող արդյունք։ Ապա Պապը, առանձնակի ուշադրություն հրավիրելով Արեւելքի քրիստոնյա համայնքների նկատմամբ տեղի ունեցած ողբերգական իրադարձությունների վրա, աղոթք բարձրացրեց՝ խաղաղության հաստատման համար[46]։ Պապի հրապարակային խոսքը դարձավ այն եզակի ձայներից մեկը, որոնք բարձրացան այդ ժամանակաշրջանում՝ ի պաշտպանություն «ծանր տառապանք կրող» հայ ժողովրդի, որը գտնվում էր բնաջնջման եզրին»[47]։

Արդեն 1915 թ. վերջին Անջելո Դոլչին ստիպված էր ցավով արձանագրել, որ առնվազն մեկ միլիոն հայեր՝ Առաքելական Եկեղեցու հետեւորդներ, ներառյալ 48 եպիսկոպոս եւ շուրջ 4500 քահանա, արդեն իսկ սպան-

---

[45] *Տե՛ս* M. Hesemann, Völkermord an den Armeniern…, *էջ 271։*

[46] *Տե՛ս* Actes de Benoit XV, tome premier, 1914–1918, Paris, 1924, *էջ 107։*

[47] *Տե՛ս* La Chiesa Cattolica e il Genocidio degli Armeni, https://laterradihayk.com/2016/06/28/la-chiesa-cattolica-e-il-genocidio-degli-armeni/ *(մուտք՝ 09.10.2025)։*

վել էին։ Բացի այդ, նույն ժամանակահատվածում սպանվել էր հայ կաթոլիկ հինգ եպիսկոպոս, 140 քահանա, 42 միաբան եւ մոտավորապես 85000 հավատացյալ։ Բռնի տեղահանությունների եւ զանգվածային կոտորածների հետեւանքով կաթոլիկ թեմերն աստիճանաբար դադարում էին գոյություն ունենալ։ Արդեն 1915 թ. վերջին կաթոլիկ 15 թեմերից 11-ը դադարել էին գոյություն ունենալ՝ մասնավորապես Ադանայի, Անկարայի, Կեսարիայի, Դիարբեքիրի, Էրզրումի, Խարբերդի, Մալաթիայի, Մարդինի, Մուշի, Սեբաստիայի եւ Տրապիզոնի թեմերը։ Մարաշի եւ Հալեպի թեմերը մասնակիորեն ենթարկվել էին ավերման։ Միայն Կ. Պոլսի եւ Բուրսայի թեմերն էին պահպանվել համեմատաբար անվնաս, թեեւ դրանք եւս կրել էին որոշակի մարդկային ու նյութական կորուստներ, շուրջ 70 եկեղեցի եւ նույնքան դպրոց բռնագրավվել էր[48]։ Անջելո Դոլչին ցավով արձանագրում էր, որ թուրքական կառավարությունը, որ խոստացել էր խնայել կաթոլիկ հայերին, ակնհայտորեն խախտել էր այդ խոստումը, որ տեղահանություններն իրականացվել են համակարգված ձեւով։ Առաքելական նվիրակն այլեւս պատրանքներ չուներ եւ լիովին համոզված էր, որ թուրքական իշխանությունները խաբել էին ոչ միայն Հռոմի պապին եւ իրեն, այլեւ ողջ համաշխարհային հանրությանը։ Հիասթափված եւ հուսալքված՝ նա այդ մասին նամակով հայտնում է Վատիկանի Պետական քարտուղարության արտաքին գործերի բաժնի քարտուղար Էուջենիո Պաչելլիին[49]։

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Առաքելական նվիրակ Անջելո Դոլչիի փաստագրությունները կարեւոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Օսմանյան կայսրության տարբեր նահանգներում հայ բնակչության նկատմամբ իրականացված տեղահանությունների եւ բռնությունների ուսումնասիրման համար։ Նրա զեկույցներում արտացոլվում են կայսրության տարածքում 1915 թ. ընթացող հարկադիր տեղահանությունների կազմակերպված բնույթը, դրանց ուղեկցող զանգվածային բռնությունները, ինչպես նաեւ տեղահանված բնակչության սոցիալական ու բարոյահոգեբանական ծանր վիճակը։ Իր զեկուցագրերում Դոլչին փաստագրում էր ինչպես կենտրոնական իշ-

---

[48] *Տե՛ս* La Questione Armenia, Documenti dell' Archivio Segreto Vaticani (ASV) & dell' Archivio Storico della Segreteria di Stato, Sezione per I Rapporti con gli stati (SS. RR. SS), vol. IV..., *էջ 178։*

[49] *Տե՛ս* M. Hesemann, Völkermord an den Armeniern..., *էջ 272։*

խանությունների դերակատարությունը, այնպես եւ տեղական իշխանությունների մասնակցությունը իրականացվող քաղաքականությանը։ Նրա հաշվետվությունները հանդիսանում են առաջնային եւ անմիջական վկայություններ, որոնք եւս մեկ անգամ ընդգծում են թուրքական վարչակարգի ցեղասպան քաղաքականության իրական նպատակները։ Դոլչին իր զեկույցներում ու հաշվետվություններում արձանագրում էր՝

- *հայ բնակչության վրա գործադրված պետական հրահանգներով կազմակերպված բռնությունները,*
- *հայ գաղթականների մահվան շարասյուների անմարդկային պայմանները,*
- *տեղահանության անվան տակ իրականացվող համատարած սպանդը,*
- *Օսմանյան իշխանությունների կողմից փաստերի պաշտոնական ժխտումը եւ միջազգային վերահսկողությունից խուսափելու ջանքերը։*

Դոլչիի զեկույցները կարեւոր սկզբնաղբյուրային նշանակություն ունեն Հայոց ցեղասպանության պատմական-աղբյուրագիտական ուսումնասիրությունների համար։

ՀԻՄՆԱԲԱՌԵՐ

Հայոց ցեղասպանություն, Բենեդիկտոս ԺԵ. պապ, առաքելական նվիրակ, Անջելո Դոլչի, մարդասիրական օգնություն, տեղահանություն, կոտորած:

РЕЗЮМЕ

В результате геноцидной политики, проводимой турецкими властями, западные армяне оказались перед реальной угрозой физического уничтожения. В этих тяжёлых условиях некоторые нейтральные государства и международные акторы не остались безучастными к страданиям армянского народа и по-разному отреагировали на происходящую трагедию. Среди них особую и значимую роль сыграл Святой Престол (Ватикан), который выступал не только как духовный центр Католической церкви, но и как актор, обладающий существенным влиянием в международных отношениях. Ватикан выдвинул ряд миротворче-

ских и гуманитарных инициатив, направленных на максимально возможное смягчение катастрофической ситуации, сложившейся в результате войны и массового насилия.

В рамках деятельности Святого Престола, направленной на поддержку армян, особое значение имела дипломатическая и гуманитарная деятельность апостольского нунция, аккредитованного в Константинополе, Анджело Дольчи. Находясь в непосредственном центре событий, он сыграл важную роль в сборе и передаче информации о насилии, осуществляемом в отношении армянского народа в Османской империи, а также в оказании возможной помощи армянскому населению, в особенности женщинам и сиротам. Деятельность Дольчи внесла значительный вклад в формирование гуманитарной позиции Святого Престола и в процесс международного информирования.

SUMMARY

The genocidal policy implemented by the Turkish regime resulted in the Western Armenians facing a real threat of physical annihilation. In these challenging circumstances, some neutral states and international actors responded to the suffering of the Armenian people in various ways. The Holy See (Vatican) played a particularly important role, acting as both the spiritual center of the Catholic Church and a significant player in international relations. The Vatican came up with a number of peace-making and humanitarian initiatives aimed at mitigating the catastrophic situation created by the war and mass violence.

The diplomatic and humanitarian activities of Angelo Dolci, the apostolic nuncio accredited to Constantinople, were particularly important in the context of the Holy See's pro-Armenian activities. Being at the heart of events, Dolci played a key role in gathering and disseminating information about the violence against the Armenian people in the Ottoman Empire, as well as in aiding the Armenian population, especially women and orphans. Dolci's work made an important contribution to shaping the Holy See's humanitarian position and raising international awareness.